Doi: 10.56737/2953-7843-2025.08-75

ԱՎԵՏԻՍ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
Պատմական գիտ. թեկնածու

ՎԱՆԻ ՆԱՀԱՆԳԻ ՌԱԶՄԱ-ԿՈՒՍԱԿՑԱԿԱՆ ԳՈՐԾԻՉՆԵՐԻ, ՄՏԱՎՈՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԵՒ ՀՈԳԵՒՈՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՈՉՆՉԱՑՄԱՆ ՀԱՐՑԸ 1914–1915 ԹԹ.

Սկիզբը՝ թիվ Ը.

Ե. ԱՐԱՄԻ ՁԵՐԲԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՁԱԽՈՂՈՒՄԸ

Ա. Վռամյանն ու Արամը նախապես պայմանավորվել էին, որ «միասին եւ միաժամանակ երբեւէ չի ներկայանալ կուսակալին»[1], քանի որ Վանի փրկության համար նրանցից գոնե որեւէ մեկը պետք է ազատ մնար։ Հետեւաբար Ա. Վռամյանի երկտող-նամակն ստանալուց հետո Արամն առժամանակ հետաձգում է իր հանդիպումը կուսակալի հետ։

Նորաշենի թուրք ոստիկանները Արամին գտնելուց, «Աշխատանք» թերթի խմբագրատունը խուզարկելուց ու զենք հայտնաբերելուց հետո, նրան տեղեկացնում են, որ կուսակալը ցանկանում է «կարեւոր եւ անյետաձգելի գործի մը համար»[2] իր հետ հանդիպել։ Արամը պատրաստվում էր կառք նստել՝ Թ. Ջեւդեթին այցելելու նպատակով, սակայն տեղ հասած հայ կառապանը նրան տեղեկացնում է Իշխանի սպանության եւ Ա. Վռամյանի ձերբակալության մասին։ Այդ մասին ժամանակակիցը նշում է. «1915 Ապրիլին սկիզբները, հրէշը հրաւիրած էր զինք խորհրդակցելու «կարեւոր եւ անյետաձգելի գործի մը համար»։ Հակառակ զգուշացումներու, Արամ կառք կը նստի մեկնելու համար. հազիւ ճամբայ կ՚ելլէ հապճէպ սուրացող հայ կառապան մը կը փաթթուի անոր ոտքերուն գրեթէ պոռալով՝ «— Ո՞ւր, Պր. Արամ, ի սէ՛ր Աստուծոյ… Իշխանն սպաննած են Շատախի ճամբուն վրայ եւ Վռամեանն ալ ձերբակալած են… ո՞ւր կ՚երթաք, ի սէ՛ր Աստուծոյ…»[3]։

---

[1] *ՀԱԱ, ֆ. 450, ց. 1, գ. 45, թ. 45։*

[2] *Անդ։*

[3] *Արամը. մահուան յիսնամեակին առթիւ, էջ 458, նաեւ «Հայրենիք ամսագիր», Բոստոն, 1924, թիւ 8, յունիս, էջ 93։*

Արամն անմիջապես իջնում է կառքից, ճողոպրում հայկական թաղերը, ապա ուղղություն վերցնում դեպի «Աշխատանքի» *խմբագրատուն*[4] *եւ ազատվում Թ. Ջեւդեթի որոգայթից*[5]*։ Թեեւ Արամը փրկվում է, սակայն ժամանակի դաշնակցական գրագրություններում այնքան էլ հստակ չի ներկայացված նրա հետագա ճակատագիրը, քանի որ շրջանառվում էին չպարզաբանված խոսակցություններ այն մասին,* «...որ ընկերներ Արամ եւ Վռամեան կախուած են»[6]*։*

Նույն օրը Արամն սպասվող նոր վտանգներն ու անակնկալները բացառելու եւ ժամանակ շահելու համար դիմում է իտալական փոխհյուպատոս Գ. Սպորդոնիին՝ խնդրելով, որ նա Թ. Ջեւդեթից ճշտի Ա. Վռամյանի ձերբակալման, Իշխանի սպանության ու քաղաքի պաշարման պատճառները։ Վերջինս Վանի ազգային քաղաքական ժողովի ատենապետ Գեւորգ Ճիտեջյանի, Ավետիս Թերզիբաշյանի, Վանի հոգեւոր առաջնորդ՝ Եղնիկ վարդապետի եւ ամերիկյան միսիոներ՝ դոկտ. Հշերի ընկերակցությամբ այցելում է Թ. Ջեւդեթին։ Հյուպատոսը ներկայացնելով Վանի հայության անելանելի եւ սրտաբեկ իրավիճակը եւ նրա պատրաստակամությունը բավարարելու կառավարության օրինական բոլոր պահանջները, խնդրում է, որ բացատրություն ներկայացվի Ա. Վռամյանի անակնկալ ձերբակալության, Իշխանի եւ նրա ընկերների սպանության մասին, եւ թե ինչու՞ էր քաղաքը հայտնվել պաշարման օղակում։ Սակայն Թ. Ջեւդեթը խուսափողական պատասխան է տալիս եւ ինչպես Ա-Դո-ն է նկատում, հանդիպման ժամանակ «բոլորովին այլ լեզու բանեցրեց, նրա մէջ խօսում էր սպառնական տօնը»[7]*։ Նա Ա. Վռամյանի ազատ արձակումը մերժում է՝ պատճառաբանելով, որ այն կենտրոնական կառավարության պահանջն էր։ Իշխանի եւ նրան ուղեկցող ընկերների սպանության մասին տեղեկացնում է, որ իբր թուրք զինվորները պահանջել են, որ նրանք անձնատուր լինեն, սակայն չեն հանձնվել, որի համար էլ սպանվել են։ Թ. Ջեւդեթը հերքում է քաղաքի պաշարման եղելությունը, նշելով, որ ինքը ժողովրդի դեմ ոչինչ չունի եւ ցանկություն է հայտնում անձամբ տեսնել Արամին, որին* «իբր շատ է

---

[4] *Տե՛ս ՀԱԱ, ֆ. 450, ց. 1, գ. 45, թ. 45։*

[5] *Տե՛ս* Ա. ՎԷՐ. ԿԷՕՐԿԻՋԵԱՆ, *նշ. աշխ., էջ 89։*

[6] *Նիւթեր Հ. Յ. Դաշնակցութեան պատմութեան համար, հտ. ԺԱ., Պէյրութ, յունուար, 2015, էջ 422։*

[7] Ա-ԴՕ, *նշ. աշխ., էջ 157։*

սիրելիս եղել»[8]։ *Ջստանալով իրենց հուզող հարցերի իրական պատասխանը պատվիրակությունը ձեռնունայն հետ է վերադառնում, որով ըստ էության իսպառ վերանում են խաղաղության հաստատման բոլոր հույսերը։*

Զ. ՎԱՆԻ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԵՒ ՀԵՂԱՓՈԽԱԿԱՆ ՄՅՈՒՍ ԳՈՐԾԻՉՆԵՐԻ ՈՉՆՉԱՑՈՒՄԸ

Ջեւդեթի հայահալած քաղաքականության արդյունքում սպանվեցին եւ իսպառ անհետացան նաեւ Վանի գրական, հասարակական եւ հեղափոխական գործիչներից շատերը։

1915 թ. ապրիլի 8-ին Վանի բանտում սպանված 120 հայ բանտարկյալների թվում էր ՀՅԴ 8-րդ ընդհանուր ժողովի Վանի պատգամավոր եւ թուրքական բանակում կամովին զինվորական ծառայության անցած Միհրան Թերլեմեզյանը։ Նրա կորստի մասին վերջին ստույգ տեղեկությունը հաղորդեց Ռոստոմը՝ ասելով, որ նա «սպանուած է»[9]:

Դեռեւս 1914 թ. նոյեմբերի օսմանյան կառավարության դեմ մահափորձ կազմակերպելու պարսավանքով ձերբակալվել էին հնչակյան կուսակցության Վանի կենտրոնական մարմնի բոլոր հինգ գործիչները[10]՝ «Երկիր» թերթի խմբագիր Ասոն (Տիգրան Օտյանը), երիտասարդ հնչակյաններ՝ Արտաշես Սոլախյանը[11], Աբրահամ Բրուտյանը, Կարապետ Տանթեյանը (Տանթյանը) եւ Հայկակ Էրեմիշյանը (Էրեմիշմյանը)[12]։ Ձերբակալության հրամանը եկել էր Կ. Պոլսից, իսկ դրդապատճառն այն էր, որ իբր հնչակները Ռումինիայի մեջ գաղտնի ժողովներ էին կազմակերպել «ռէժիմին դէմ գործելու համար...»[13]։ *Թ. Ջեւդեթը պատրաստվում էր նրանց կախաղան բարձրացնել, սակայն* «հրեշավոր սատրապը» *պարզապես վա-*

---

[8] Հ. ԱՒ. ՔՀՆ. ՀԱՃԵԱՆ, *նշ. աշխ., էջ 377։*

[9] Մ. ԱՐՔ. ՕՐՄԱՆԵԱՆ, *Թիւրքահայ աղէտը. պատմական փաստաթուղթեր, Ա., Տեղեկագիր, էջ 34։*

[10] *Տէս Յուշամատեան Մեծ Եղեռնի 1915–1965, էջ 767։*

[11] *Նա Վանի բանտում սպանված 120 բանտարկյալներից մեկն էր, որը սահմանադրության տարիներին մշակութային բեղուն գործունեություն էր ծավալել իր ծննդավայրում՝ Վանում, 1908 թ. կազմակերպել էր առաջին թատրոնը, ստեղծել սիրողական մի թատերախումբ, բեմադրել մի շարք պիեսներ, այդ թվում իր հեղինակած՝ «Ընտանիքը», «Աղբար Թորոսին Տնակը», «Իդեալի ճգնաժամը»։*

[12] *Տէս Քսան կախաղաններ, Փրավիտենս, 1916, էջ 8, նաեւ* ԹԵՈԴԻԿ, *նշ. աշխ., էջ 55, նաեւ՝* Գ. ՍՏԵՓԱՆՅԱՆ, *Արեւմտահայ մտավորականության զոհերը, ՊԲՀ, 1965, թիվ 1, էջ 48։*

[13] Վ. ՓԱՓԱԶԵԱՆ, *նշ. աշխ, էջ 23։*

խեցավ ձերբակալվածներին բանտից դուրս բերել ու հասցնել կախաղանի վայրը։ Նա զգուշացավ Վանի բազմահազար հայությունից, որին դժվար էր հաշվեհարդարի ենթարկելը[14]։

Թ. Ջեւդեթի հրամանով Ասոն, Ա. Սոլախյանը եւ Կ. Տանթեյանը 1915 թ. ապրիլի 8-ին խեղդամահ արվեցին Վանի բանտում[15], *որի* «մէջի տեսարանը աւելի ահաւոր էր։ Բոլոր բանտարկեալ հայերը ջարդուած էին»[16]։ *Այդ մասին հայ լրաբեր-ոստիկան Հովհաննեսը հետեւյալ տեղեկությունն է հաղորդում.* «Ի՞նչ ըսեմ, ստոյգ եւ մանրամասն բան մը չեմ գիտեր։ Միայն հաստատ իմացած եմ, որ բոլոր հայերն էլ սպանված են եւ ո՛չ միայն բանտի մէջ եղողները, այլեւ Ֆըրգայի մէջ զինուորցուները, որոնք 35 հոգի էին։ Վերջիններուս համար որոշ տեսայ, որ կռուի 3րդ թէ 4րդ օրը, խումբ խումբ, թեւերնին կապած, առին տարին բանտ, որպէս թէ, բայց յետոյ իմացանք, որ բանտարկեալներու հետ միատեղ սպանված են։ Այժմ բանտի մէջ մարդ չէ մնացած։ Իսկ ֆիւրտ եւ թուրֆ բանտարկեալներն ալ ազատ արձակած են»[17]։

Իսկ Ա. Բրուտյանը եւ Հ. Էրեմիշյանը մահացան Վանի թուրքական զինվորական հիվանդանոցում։ Լորդ Բրայսը, խոսելով Ա. Բրուտյանի մահվան մասին, գրում է. «Պ. Բրուտեանի կինը իր խելքը կորսնցուցած ըլլալով կ՚աղաղակեր. «Ա՜հ, գոնէ իմ սիրելիս ոսկորները ցոյց տուէք ինձ»[18]։

Վանի ազատագրումից հետո միայն Վանի բանտի պարսպի հարավակողմում՝ մոտ 15 մ. տրամագծով փոսի մեջ, գտնվեց հայ նահատակ բանտարկյալների հսկա հողադամբարանը, որտեղ «իրարու վրայ լեցուցեր էին անոնց դիակները, յայտնապէս ամէնքն ալ շարչրկուած եւ սառն զէնֆերով յօշոտուած»[19]։

Ի դեպ, հրաշքով փրկվել է Ա. Սոլախյանի բանտային հուշատետրը, որը պատկերացում է տալիս թուրքական բանտային անհրեւակայելի անտանելի պայմանների մասին[20]։

Եւ վերջապես, իթթիհատական հայաջինջ քաղաքականության ար-

---

[14] *Տե՛ս* Կ. Սուլախյան, *նշ. աշխ., էջ 8։*

[15] *Տե՛ս* Մ. Արք. Օրմանեան, *Թիւրքահայ աղէտը. պատմական փաստաթուղթեր, Ա., Տեղեկագիր, էջ 35։*

[16] Ճ. Դերկոմս Պրաց, *նշ. աշխ., էջ 121։*

[17] Ա. Վէր. Կէօրկիզեան, *նշ. աշխ., էջ 264։*

[18] Ճ. Դերկոմս Պրաց, *նշ. աշխ., էջ 121։*

[19] Ա. Վէր. Կէօրկիզեան, *նշ. աշխ., էջ 264։*

[20] *Տե՛ս* Ա. Սուլախյան, *Բանտային հուշեր (Վանի կենտրոնական բանտի զնդան, 1914 թ. նոյեմբերի 14-ից 1915 թ. փետրվարի 14 ...), Երեւան, 2002։*

դյունքում 1915 թ. մահացավ Վասպուրականի «Կանանց միության» հայտնի դեմքերից մեկը՝ Զարուհի Շալ(ր)ջյանը[21]։

Է. ՎԱՆԻ ՀԱՅ ՀՈԳԵՒՈՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՈՉՆՉԱՑՈՒՄԸ

Վանի Ապրիլյան հերոսամարտի օրերին այրվեցին, թալանվեցին նահանգի գրեթե բոլոր վանքերն ու եկեղեցիները, սպանվեց վարդապետների եւ քահանաների առավել քան կեսը[22]։ Պղծված բազմաթիվ վանքերի ու եկեղեցիների թվում էին Վարագա լեռան Ս. Գրիգորը, Ս. Կարմրավորը, Վանի՝ Ս. Խաչը (Կուրուբաշ), Մեծոփի՝ Ս. Սքանչելագործը եւ Քաջբերունյաց գավառի Արծվաբերի վանքը[23]։ Ինչպես Մ. Օրմանյանն էր նշում ժամանակին. «Վանք չէ եղած, որ անձեռնմխելի մնացած ըլլայ, եկեղեցի չէ մնացած, որ կա՛մ քանդուած, կա՛մ պղծուած եւ կա՛մ մզկիթի փոխարկուած չըլլայ... Մահմետական խուժանը իր կատաղութիւնը ամենէն աւելի թափեց հայ վանորէից, եկեղեցեաց, դպրոցաց եւ մատենադարանաց վրայ»[24]։ *Մեծապես տուժեց հատկապես Վարագա վանքը, որն աչքի էր ընկնում իր հարստություններով[25]։ Միայն Ապրիլյան կռիվների ժամանակ կողոպտվեց մոտ 80 000 ռուբ. արժողությամբ շարժական գույք[26]։*

Անլուր չարչարանքներով սպանվեցին շուրջ չորս տասնյակ հայ հոգեւորականներ[27]։ Հիշատակության արժանի են նաեւ 1915-ի գաղթի ժա-

---

[21] *Տե՛ս* Մ. ԱՐՔ. ՕՐՄԱՆԵԱՆ, *Թիւրքահայ աղէտը. պատմական փաստաթուղթեր, Ա., Տեղեկագիր, էջ 32, 36–37։*

[22] *Տե՛ս ՀԱԱ, ֆ. 57, ց. 5, գ. 54, թ. 21։*

[23] *Տե՛ս* Գ. ՏԷՐ-ՎԱՐԴԱՆԵԱՆ, *Վասպուրականի վանքերի 1934 թուականի մի համառօտ նկարագրութիւն, «Արեւագալ», Բ., Երեւան, 2004, էջ 116։*

[24] Մ. ՕՐՄԱՆԵԱՆ, *Ազատապատում, հտ. Գ., Երուսաղէմ, 1927, էջ 5029–5030։*

[25] *Տե՛ս ՀԱԱ, ֆ. 242, ց. 1, գ. 4, թ. 1–3։*

[26] *Տե՛ս ՀԱԱ, ֆ. 57, ց. 2, գ. 1063, թ. 1։*

[27] *1915 թ ապրիլին սպանվեցին Կարճկանի Ուրանից վանքի վանահայր՝ Մատթեոս վրդ. Խաչատուրյանը, Խիզանի Ս. Խաչ վանքի վանահայր՝ Պետրոս վրդ. Գրիգորյանը, Ռշտունյաց Գավաշ գյուղի Ս. Թովմա վանքի վանահայր՝ Հովսեփ վրդ. Թովմասյանը, Ռշտունյաց Զարահան Ս. Նշան վանքի վանահայր՝ Երեմիա վրդ. Խաչատուրյանը, Աղթամարի Ս. Խաչ վանքի միաբան՝ Պողոս վրդ. Տեր-Կարապետյանը, Խիզանի Յոթ Խորան վանքի եւ Ս. Գամաղիել մենաստանի վանահայր՝ Ղեւոնդ վրդ. Հովհաննիսյանը, Կտուց Անապատի լուսարարապետ՝ Եղիա վրդ. Հակոբյանը, Կտուց անապատի միաբաններ՝ Պողոս վրդ. Հակոբյանը եւ Պետրոս վրդ. Ղազարյանը, Ներսես սարկավագը, Ալջավազի Ս. Սքանչելագործ վանքի վանահայր՝ Եղիշե վրդ. Մոկացյանը, Վարագա վանքի վանահայր՝ Վրթանես վրդ. Տեր-Սարգիսյանը (Տեւկանց), Վարագա վանքի միաբաններ՝ Արիստակես վրդ. Կատեկճյանը եւ Արիստակես վրդ. Մանուկյանը, Վարագա վանքի վերջին միաբան՝ Դանիել վարդապետը, Բերկրիի Արգելանից վանքի եւ Գործոթ գյուղի «Տէր Յուսկան որդի» մենաստանի վանահայր՝ Մանվել քահանան, Արճեշի առաջնորդա-*

մանակ Երեւանում եւ էջմիածնում մահացած Վանի քահանաները. Վանի երբեմնի առաջնորդական փոխանորդ, Մկրտիչ Ա. Խրիմյանի աշակերտ, հայտնի հայաբան, գավառային գրող, Խրիմյան Հայրիկին ձօնված ժողովրդական «Հայրի՛կ Հայրի՛կ» երգի հեղինակ՝ Մեսրոպ ավ. քհն. Ջանիկյանը, Հուսիկ քհն. Փեհրիզյանը, Ղեւոնդ քհն. Սաֆրաստյանը, Նորաշենի Խորեն քհն. Տեր-Կարապետյանը[28]*։*

Վասպուրականի կուսակրոն հոգեւորականներից կոտորածների ժամանակ փրկվում են միայն՝ Աղթամարի կաթողիկոսական երբեմնի փոխանորդ Վանի առաջնորդական տեղապահ Եղնիկ վրդ. Ներկարարյանը, Աղթամարի միաբան, արմաշական վանահայր՝ Դանիել վրդ. Զադոյանը, Լիմ Անապատի միաբան՝ Սահակ վրդ. Ատոմյանը, Լիմ Անապատի միաբան Մատթեոս վրդ. Աճեմյանը, Կտուց Անապատի միաբան՝ Պետրոս վարդապետը, Կտուց Անապատի միաբան՝ Ստեփան վարդապետը եւ Վանի Ս. Կարմրավոր վանքի վանահայր՝ Եղիշե վրդ. Խերանյանը[29]*։*

Այսպիսով՝ թուրքական կառավարության նպատակամղված ցեղասպան քաղաքա-կանության արդյունքում կազմակերպված ձեւով ոչնչացվում են Վանի զինվորական-կուսակցական գործիչների, մտավորականության եւ հոգեւորականության լավագույն ու ազգանվեր ներկայացուցիչներից շատերը. անդառնալի կորուստ ոչ միայն Վասպուրականի, այլեւ ողջ արեւմտահայության համար։

կան փոխանորդ Տեր Եղիշեն, Նորդուզի Ս. Հոգոց վանքի վանահայր Տեր Վահանը, Աղբակի շրջանի հոգեւոր հովիվ՝ Մեսրոպ քահանան, Կղզի գյուղի հոգեւոր հովիվ՝ Մկրտիչ քահանան, Ադիլջեւազի Ս. Սքանչելագործք վանքի վանահայր՝ Եղիշե Մոկացյանը, Եղեգի գյուղի հոգեւոր հովիվ՝ Հակոբ քահանան, Աղբակի հոգեւոր հովիվ՝ Հովհաննես քահանան, Աղթամարի հոգեւոր հովիվ՝ Գեւորգ քահանա Շաքարյանը, Կտուց վանքի վանահոր տեղապահ՝ Եղիազար ծ.վրդ. Պետրոսյանը, եւ վանքի միաբան՝ Ստեփանոս վրդ. Տեր-Հովհաննիսյանը, Ալլուր գյուղի հոգեւոր հովիվներ՝ Հովհաննես քահանա Տեր-Հովհաննիսյանը, Կարապետ քահանա Թուխիկյանը եւ Սարգիս քահանա Տեր-Սարգսյանը, Կռել գյուղի հոգեւոր հովիվ՝ Գարեգին վարդապետը, Վան քաղաքի Տիրամեր գյուղի հոգեւոր հովիվ՝ Գեւորգ քահանան, Երընգան գյուղի հոգեւոր հովիվ՝ Մարտիրոս քահանան, Խավենց գյուղի Բարձրագնաց Ս. Աստվածածին եկեղեցու հոգեւոր հովիվ՝ Աբրահամ Տեր-Հովհաննիսյանը, Լիմ անապատի միաբան՝ Ավետիս վրդ. Սեդրակյանը, Քարաձորիկ գյուղի հոգեւոր հովիվ՝ Վարդան քահանան, Շատախի շրջանի հոգեւոր հովիվներ՝ Ավետիս քահանա Տեր-Գալուստյանը, Մկրտիչ քահանա Տեր-Գալուստյանը, Մխիթար քահանա Տեր-Մխիթարյանը։ Ավելի հանգամանորեն տե՛ս Տ. Թէոդիկ, *Գողգոթա. թրքահայ հոգեւորականութեան եւ իր հօտին աղէտալի 1915 տարիին (նոր Ղեւոնդեանք), հատոր առաջին (Ա. մաս) 2.- Վան, Անթիլիաս, Լիբանան, 1966, էջ 24–36, նաեւ՝* Բ. Վրդ. Ջարեան, *Հայ հոգեւորականութեան կորուստը Մեծ Եղեռնին, Անթիլիաս–Լիբանան, 2005, էջ 119–180։*

[28] *Ավելի հանգամանորեն տե՛ս անդ։*

[29] *Տե՛ս անդ։*

ՀԻՄՆԱԲԱՌԵՐ

Վանի նահանգ, մտավորականություն, հոգեւորականություն, եղեռն:

РЕЗЮМЕ

Настоящее исследование посвящено систематическому уничтожению армянской военно-политической элиты, интеллигенции и духовенства в Ванском вилайете в 1914–1915 гг., осуществлённому в рамках геноцидной политики младотурецкого правительства. На основе архивных материалов, свидетельств очевидцев и дипломатических донесений автор подробно восстанавливает последовательность действий, направленных на обезглавливание армянского общества и разрушение его культурно-политической структуры.

Первыми жертвами стали видные представители интеллигенции – филолог Ованнес Кулоглян и переводчик Гевонд Срывандзтян, после чего последовал ряд убийств общественных деятелей, революционеров и активистов по всему региону. Особо анализируется преднамеренное убийство Ишхана – одного из главных организаторов армянской самообороны, а также арест, ссылка и казнь депутата османского парламента Аршака Врамяна. Эти акции, инициированные ванским губернатором Джевдет-беем, имели целью устранение руководящего слоя армян и подавление всякой возможности сопротивления.

Автор освещает также резню в деревне Хырч, где были уничтожены десятки армянских мужчин, а затем – почти полное исчезновение культурных, общественных и революционных деятелей Вана. Систематическое разрушение монастырей, церквей, школ и библиотек свидетельствует о намерении османских властей не только физически уничтожить армян, но и стереть их культурное присутствие в Васпуракане.

Убийства Ишхана и Врамяна оказали решающее воздействие на дальнейшее развитие событий: они потрясли население, сплотили его и ускорили организацию апрельской обороны Вана в 1915 г. Их мученическая гибель стала нравственным импульсом, объединившим разные слои общества. В заключение подчёркивается, что преднамеренная ликвидация духовных, интеллектуальных и военных лидеров являлась составной частью общего плана геноцида армян в Османской империи.

SUMMARY

The study examines the systematic destruction of the Armenian political-military leadership, intelligentsia, and clergy in the Van Province during 1914–1915, as part of the genocidal policy implemented by the Young Turk government. Drawing on archival evidence, eyewitness accounts, and contemporary diplomatic reports, the author reconstructs the targeted elimination of key Armenian figures, whose influence was crucial in the sociopolitical life of Vaspurakan.

The first victims included prominent intellectuals such as linguist Hovhannes Kuloghlyan and translator Ghevond Srvandztyan, followed by a series of assassinations of community leaders, revolutionaries, and activists across the province. Particular attention is paid to the premeditated murder of Ishkhan–one of the principal organizers of Armenian self-defense–and the arrest, exile, and subsequent execution of parliamentary deputy Arshak Vramyan. These actions, orchestrated by Governor Jevdet Bey, were intended to decapitate the Armenian leadership and eliminate the capacity for organized resistance.

The narrative further documents the massacre in the village of Hırch, where dozens of Armenian men were slaughtered, as well as the near-complete annihilation of cultural figures, revolutionary militants, and clergy of Van. Through the destruction of churches, monasteries, schools, and manuscript repositories, the Ottoman authorities sought not only to physically exterminate Armenians, but also to eradicate their cultural presence in Vaspurakan.

The killings of Ishkhan and Vramyan had profound consequences, galvanizing the local population and precipitating the April 1915 heroic self-defense of Van. Their martyrdom became a unifying force that transformed uncertainty into collective determination. The study concludes that the deliberate elimination of the intellectual, religious, and military leadership of Van constituted an integral component of the broader genocidal strategy of the Ottoman state.